

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար**  
**կապալային աշխատանքների կատարման**  
**N ՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/07-12**

ք. Քաջարան

« 13 » 09 2019 թ.

Քաջարանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊՍՏՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սևակ Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

- չափաբաժին 1՝ 120 օր
- չափաբաժին 2՝ 120 օր
- չափաբաժին 3՝ 360 օր
- չափաբաժին 4՝ 120 օր

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
- բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),
- գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի՝ տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազմանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական ծրայի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **161 828 700 (մեկ հարյուր վաթսունմեկ միլիոն ութ հարյուր քսանութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, որից 26 971 450 (քսանվեց միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝**

1-ին չափաբաժին 31 928 400 (երեսունմեկ միլիոն ինը հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 5 321 400 (հինգ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժին 36 833 400 (երեսունվեց միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 6 138 900 (վեց միլիոն մեկ հարյուր երեսունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժին 61 485 900 (վաթսունմեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ որից 10 247 650 (տասը միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժին 31 581 000 (երեսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ որից 5 263 500 (հինգ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն :

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V = M / N \times 40$ , որտեղ՝

V-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

N-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

40-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

V-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված՝ մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՊԱԼԱՐՈՒ**

Քաջարանի համայնքապետարան  
ք.Քաջարան, լեռնագործների 4  
ՀՀ ՖՆ գործառն. Վարչ.  
ՀՀ 900312467104  
ՀՎՀՀ 09426045

«Պստո» ՍՊԸ  
ք. Երևան, Հստոնական փ. 9 շ. 28 բն.  
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ  
ՀՀ 16063016896300  
ՀՎՀՀ 01285811

/ստորագրություն/  
Կ.Տ.



**Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ \***

**Քաջարան համայնքի Բաբիկավան բնակավայրի հրապարակի վերակառուցման աշխատանքների**

հազ. դրամ

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը	Աշխատանքի ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	<b>Սպորտ հրապարակի ցանկապատ</b>				
1	Ասֆալտ բետոնե ծածկի քանդում	քմ	305.00	0.533	162.57
2	Հիմքերի փորում եքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողալիցքում	խմ	11.20	0.851	9.53
3	Գրունտի լրամշակում ձեռքով	խմ	0.88	2.999	2.64
4	Խճի նախապատրաստական շերտի կառուցում 20-40 մմ ֆրակցիա	խմ	2.43	10.033	24.38
5	Ե/բ ժապավենային հիմքերի կառուցում Բ20 դասի բետոնով	խմ	3.16	61.518	194.40
6	Ամրան Փ8 AIII	տ	0.09	509.902	43.85
7	Ամրան Փ6 AII	տ	0.09	503.721	45.84
8	Ե/բ սյունատակի հիմքերի կառուցում Բ20 դասի բետոնով	խմ	3.23	67.909	219.35
9	Ամրան Փ14 AIII	տ	0.46	495.002	228.20
10	Սպորտ հրապարակի մետաղական ցանկապատի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	3.73	72.778	271.46
11	խողովակ N 60 x 40 x3,0 պրոֆիլի	մ	216.00	2.565	554.04
12	խողովակ N 20 x 20 x2,0 պրոֆիլի	մ	1080.00	0.658	710.64
13	խողովակ N 40 x 40 x2,0 պրոֆիլի	մ	330.00	1.341	442.53

14	խողովակ N 40 x20 x2,0 պրոֆիլի	մ	486.00	1.006	488.92
15	շերտավոր պողպատ N 30 x 3 պրոֆիլի	մ	475.20	0.510	242.35
16	Ծխնի դռների	զույգ	1.00	3.179	3.18
17	Կողպեք	հատ	1.00	3.973	3.97
18	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	240.72	1.375	330.99
<b>Տարածքի ծածկույթների կառուցում</b>					
1	Սպորտային հրապարակի ռետինե ծածկույթի իրականացում	քմ	165.60	28.917	4788.66
2	Խճային հիմքի կառուցում, 15 սմ հաստությամբ	խմ	24.84	12.653	314.30
3	Խոշորահատիկ ասֆալտ 4 սմ	քմ	165.60	3.833	634.74
4	Մանրահատիկ ասֆալտ 4 սմ	քմ	165.60	4.151	687.41
5	Արհեստական կաուչուկ 15 մմ հաստությամբ պոլիուրետանի հիմքով	քմ	165.60	5.915	979.52
6	Խճային հիմքի կառուցում 8 սմ հաստությամբ դեկորատիվ սալիկներով ծածկույթի տակ,	խմ	10.36	11.370	117.79
7	Ավազի նախաշերտի փոռում մայթերի բետոնե սալիկների տակ 6սմ հաստությամբ ցեմենտի խառնուրդով 1:4 հարաբերությամբ	խմ	7.77	8.816	68.50
8	Հրապարակի սալարկում բետոնե դեկորատիվ սալիկներով կարանները լցնելով ավազով	քմ	129.53	6.874	890.39
9	Մանկական խաղահրապարակի ծածկի նախապատրաստական շերտի կառուցում խարամից 15սմ հաստությամբ	խմ	2.84	9.041	25.68
10	Մանկական խաղահրապարակի խճային շերտի կառուցում 6սմ հաստությամբ 5-10 մմ ֆրակցիա	խմ	2.13	12.666	26.98
11	Մանկական խաղահրապարակի ավազի շերտի փոռում, 15 սմ հաստ.	խմ	10.05	0.922	9.27
12	Բազալտե սալիկներով ծածկի կառուցում	քմ	35.78	17.607	629.98

13	Բազալտե եզրաքարերի տեղադրում մանկական խաղահրապարակի եզրագծով 120x300 մմ	մ	192.60	10.439	2010.55
14	Բազալտե ցայտաղբյուրի տեղադրում 30 x30x70սմ	հատ	1.00	328.598	328.60
15	Նստարանների տեղադրում	հատ	38.00	143.269	5444.22
16	Աղբամանների տեղադրում	հատ	38.00	46.004	1748.15
<b>Էլեկտրականություն</b>					
1	Փոսերի փորում լուսավորության նոր հենասյունների համար -	խմ	8.60	4.658	40.06
2	Փոսերի բետոնացում Բ15 դասի բետոնով	խմ	8.58	46.593	399.77
3	Ավազ 0.2մ հաստ անկողնակի համար	խմ	21.00	4.964	104.24
4	Խրամուղու իրականացում 1 մալուխի համար	խմ	84.00	0.851	71.48
5	Գրունտի հետլիցք	խմ	63.00	1.272	80.14
6	Նոր մետաղական սյուների տեղադրում $\Phi$ 100 մմ x 3.0մմ, h=3.0 մ -18հատ; $\Phi$ 140մմ x 4.5մմ h=3.5 մ - 4 հատ; բարձակ՝ 4. հատ	տ	0.67	114.649	76.81
7	խողովակ $\Phi$ =100մմ x 3մ x 3.5մմ- 39հատ	մ	117.00	4.321	505.56
8	խողովակ $\Phi$ =140 մմ x 4հատ x4.5մ	մ	18.00	7.646	137.63
9	Պղնձե մալուխի անցկացում 2.5 ք/մմ կտրվածքով, ՈՅ 380	100 մ	2.60	68.083	177.02
10	Տուփ բաժանարար 100*100 մմ, Y996Y1	հատ	71.00	3.338	237.00
11	Ապահովիչ 6A E27	հատ	71.00	4.768	338.53
12	Մալուխ ալյումինե 4x10ք/մմ ABBF-1.0	մ	350.00	0.824	288.40
13	խողովակ PVS $\Phi$ 40մմ	մ	350.00	1.020	357.00
14	Խրամուղի 0.8x0.3x350մ՝ 1 մալուխի համար	մ3	84.00	0.851	71.48
15	Հաղորդալար պղնձե 2.5 ք/մմ կտրվածքով ՈՅ-380	մ	260.00	0.385	100.10
16	Ազդանշանային ժապավեն 150մմ լայնքով	մ	350.00	0.049	17.15
17	Ավտոմատ անջատիչ 3 րեվեռանի 50Ա	հատ	1.00	4.282	4.28
18	Հաշվիչ էլեկտրոնային 2 տարիֆանի 380Վ, 65 Ա	հատ	1.00	32.939	32.94
19	Մալուխ ալյումինե 4x16ք/մմ ABBF-1.0	մ	10.00	1.099	10.99

20	Արկղ մետաղական ավտոմատ անջանիչների համար	հատ	1.00	39.733	39.73
22	Մետաղական խողովակների յուղաներկում	քմ	44.65	0.999	44.61
<b>Ծաղկանոց</b>					
1	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին սիզամարգերի համար	1000 խմ	0.023	513.966	11.82
2	Բնահողի տեղափոխում 10 կմ հեռ. վրա	տ	32.83	3.562	116.94
3	Բնահողի փոռում գազոններում	խմ	23.45	4.607	108.03
4	Խճային շերտի կառուցում 5-10 մմ ֆրակցիա	խմ	14.07	12.666	178.21
5	Ավազե նախապատրաստական շերտի կառուցում	խմ	9.38	6.623	62.12
6	Սիզամարգերի նախապատրաստում ձեռքով, խոտի ցանում	100 քմ	0.94	91.556	86.06
<b>Զրուցարան</b>					
1	Զրուցարանի տեղադրում	հատ	1.00	385.700	385.70
1	Ճոճանակ Վիզվան մարկայի	հատ	2.00	585.655	1171.31
2	Ճոճանակ Վիզվան մարկայի	հատ	2.00	55.318	110.64
3	Ճոճանակ փոքր տարզան	հատ	2.00	360.325	720.65
4	Փոքր նստարան	հատ	30.00	19.488	584.64
5	Փոքր աղբաման	հատ	28.00	2.538	71.06
<b>Ընդամենը</b>					<b>29425.67</b>
<b>ԱԱՀ 20%</b>					<b>5885.13</b>
<b>Ընդամենը</b>					<b>35310.81</b>

\*Կապալառուն աշխատանքները կատարում է Քաջարան համայնք, բնակավայր Բաբիկավան հասցեում:

**Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ Ն Ա Խ Ա < Ա Շ Ի Վ \***

**Քաջարան քաղաքի Աբովյան փողոցի թ5 և թ7 շենքերին հարող տարածքի խաղահրապարակի վերակառուցման աշխատանքների**

հազ. դրամ

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	<b>Աստիճաններ</b>				
1	Բազալտե աստիճանների ապամոնտաժում	մ	24.00	1.509	36.22
2	Պատի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում Բ-15 դասի բետոնով	խմ	1.60	46.365	74.18
3	Ե/պատի կառուցում Բ15 դասի բետոնով 40,0սմ հաստությամբ (բետոնե պատի լրացում)	խմ	1.80	72.279	130.10
4	Ամրան Փ14 AIII	տ	0.073	492.579	35.96
5	Ամրան Փ6 A1	տ	0.015	494.667	7.42
6	Նախապատրաստական շերտի կառուցում Բ-15 դասի բետոնով նոր տեղադրվող աստիճանների տակ	խմ	1.66	47.433	78.74
7	Ամրան Փ12 AIII	տ	0.036	494.556	17.80
8	Բազալտե աստիճանների կառուցում 300x150մմ	մ	51.90	17.170	891.12
9	Բազալտե սալիկներով ծածկույթի կառուցում	քմ	4.52	17.521	79.19
10	Բազալտե եզրաքարերի տեղադրում 120x300 մմ	մ	7.50	10.388	77.91
	<b>Բակային ջրավազան</b>				
1	Խճի նախապատրաստական շերտի կառուցում 12սմ հաստությամբ	խմ	5.45	15.198	82.83
2	Ե/բետոնյա պատերի կառուցում B-20 դասի ծանր բետոնից 30,0սմ հաստությամբ	խմ	7.00	85.468	598.28
3	Ամրան Փ8 AIII	տ	0.014	507.406	7.10
4	Ամրան Փ4 ԵՐ	տ	0.041	658.970	27.02
5	Ամրան Փ12 AIII	տ	0.843	511.691	431.36
6	Հատակի կառուցում Բ-20 դասի բետոնով	խմ	9.20	50.794	467.30
7	Ամրան Փ8 AIII	տ	0.014	507.406	7.10
8	Ամրան Փ4 ԵՐ	տ	0.042	658.970	27.68
9	Ամրան Փ12 AIII	տ	0.987	511.691	505.04
10	Կերամիկական սալիկներով հատակի կառուցում	քմ	45.20	10.395	469.85

11	Պատերի բարձրակ սվաղում ց/ավազե շաղախով ջրակայուն լցանյութերով	քմ	31.68	2.797	88.61
12	Պատերի և հատակի հիդրոմեկուսացում իզոգամով երկու շերտ	քմ	76.88	5.980	459.74
13	Պատերի երեսապատում հախճասալիկներով	քմ	31.68	16.024	507.64
14	Ց/ավազե հարթեցնող շերտի կառուցում 30 մմ հաստությամբ	քմ	45.20	1.395	63.05
<b>Ջրամատակարարում և ջրահեռացում</b>					
1	Խրամուղու փորում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողալիցքում ջրամատակարարման և ջրահեռացման համար	խմ	19.80	0.847	16.77
2	Ավազի նախաշերտի կառուցում	խմ	4.40	4.940	21.74
3	Ավազի շերտի կառուցում խողովակի վրա, 15 սմ	խմ	5.28	7.201	38.02
4	Պոլիպրոպիլենային $\Phi=20$ մմ խողովակների տեղադրում	մ	28.00	0.682	19.10
5	Պոլիպրոպիլենային $\Phi=25$ մմ խողովակների տեղադրում	մ	22.00	0.914	20.11
6	Փականների տեղադրում պոլիպրոպիլենային $\Phi 20$ մմ	հատ	6.00	4.340	26.04
7	Ձևավոր մասեր	հատ	12.00	0.633	7.60
8	Ոռոգման ծորակ $\Phi 25$	հատ	2.00	4.457	8.91
9	Հորի կառուցում $\text{P}15$ դասի բետոնով փականի տեղադրման համար 15,0սմ պատի հաստությամբ /2 հատ/	խմ	1.29	108.005	139.33
10	Մետաղական ցանց $\text{Bp } 4, 10 \times 10$ / թվով 2 հորի համար/	քմ	8.32	0.797	6.63
11	Ե/բետոնե դիտահորի կափարիչ 1200x1200	հատ	2.00	105.436	210.87
12	Թուջե մտոց $d=530$ մմ	հատ	2.00	63.261	126.52
13	Հորի մետաղական կափարիչի տեղադրում թիթեղ 4,0մմ /2 հատ/	տ	0.05	730.977	36.55
14	Հորի հետադարձ լիցք	խմ	10.12	1.040	10.52
<b>Կոյուղու կառուցում</b>					
1	Կոյուղու պոլիվինիլլոլորիդային $\Phi 63$ մմ խողովակի տեղադրում	մ	4.00	1.492	5.97
2	Նույնը՝ $\Phi 110$ մմ խողովակի տեղադրում	մ	5.00	2.072	10.36
3	Կոյուղու ՊՎԼ ծալքավոր խողովակի տեղադրում $\Phi 150$ մմ	մ	35.00	5.684	198.94
4	Ավազի նախաշերտի և խողովակի վրա կառուցում /10սմ+20սմ/	խմ	13.20	4.940	65.21
5	Կոյուղու հորի կառուցում $\text{P}15$ դասի բետոնով փականի տեղադրման համար 15,0սմ պատի հաստությամբ 1 հատ/	խմ	1.19	108.005	128.53

6	Մետաղական ցանց Bp 4, 10*10 /թվով 1 հորի համար/	քմ	4.16	0.797	3.32
7	Փականների Փ 50 մմ ՊՆ 16 տեղադրում /2 հատ/	հատ	2.00	8.461	16.92
<b>Սպորտ հրապարակի ցանկապատ</b>					
1	Հիմքերի փորում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողայիցքում	խմ	13.44	0.847	11.38
2	Գրունտի լրամշակում ձեռքով	խմ	1.17	2.984	3.49
3	Խճի նախապատրաստական շերտի կառուցում 20-40 մմ ֆրակցիա h=8 սմ	խմ	1.26	9.984	12.58
4	Ե/բ ժապավենային հիմքերի կառուցում P20 դասի բետոնով	խմ	4.20	61.217	257.11
5	Ե/բ սյունատակի հիմքերի կառուցում P20 դասի բետոնով	խմ	10.37	67.576	700.76
6	Ամրան Փ8 AIII	տ	0.097	507.406	49.22
7	Ամրան Փ6 AI	տ	0.114	501.256	57.14
8	Ամրան Փ14 AIII	տ	0.015	492.579	7.39
9	Սպորտ հրապարակի մետաղական ցանկապատի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	4.43	72.422	320.83
10	խողովակ N 60 x 40 x3,0 պրոֆիլի	մ	261.40	2.553	667.35
11	խողովակ N 20 x 20 x2,0 պրոֆիլի	մ	1280.00	0.655	838.40
12	խողովակ N 40 x 40 x2,0 պրոֆիլի	մ	384.00	1.335	512.64
13	խողովակ N 40 x 20 x2,0 պրոֆիլի	մ	576.00	1.001	576.58
14	Ծխնի դռներ	զույգ	2.00	3.163	6.33
15	Կողպեք	հատ	2.00	3.954	7.91
